

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2

Հայ- Ռուսական (Սլավոնական համալսարանի) Ուսանողական խորհրդի նիստ

18.11.2014թ.

Անցկացման վայրը: ՀՌՀ

Ներկա էին՝

1	<i>Ղուկասյան Արփինե</i>	<i>Ուսանողական խորհրդի նախագահ</i>
2	<i>Բաղդասարյան Ս.</i>	<i>Իրավունքի և քաղաքականության ինստիտուտի ուսանողական խորհրդի նախագահ</i>
3	<i>Գասպարյան Լ.</i>	<i>Իրավունքի և քաղաքականության ինստիտուտի ուսանողական խորհրդի փոխնախագահ</i>
4	<i>Բերակչյան Վ.</i>	<i>Տնտեսագիտության և բիզնեսի ինստիտուտի ուսանողական խորհրդի նախագահ</i>
5	<i>Սարգսյան Գ.</i>	<i>Տնտեսագիտության և բիզնեսի ինստիտուտի ուսանողական խորհրդի փոխնախագահ</i>
6	<i>Հովսեփյան Ս.</i>	<i>Մեդիայի, գովազդի և կինոյի ինստիտուտի ուսանողական խորհրդի նախագահ</i>
7	<i>Հարությունյան Լ.</i>	<i>Մեդիայի, գովազդի և կինոյի ինստիտուտի ուսանողական խորհրդի փոխնախագահ</i>
8	<i>Հարությունյան Ս.</i>	<i>Հումանիտար գիտությունների ինստիտուտի նախագահ</i>
9	<i>Ամալյան Ա.</i>	<i>Իրավունքի և քաղաքականության ինստիտուտի ուսանողական խորհրդի տեղակալ</i>
10	<i>Հովհաննիսյան Ս.</i>	<i>ՀՌՀ- ի «Ուսմունք» դպրոցի աշակերտական խորհրդի նախագահ</i>
11	<i>Միսակյան Լ.</i>	<i>ՀՌՀ- ի «Ուսմունք» դպրոցի աշակերտական խորհրդի տեղակալ</i>

Օրակարգը`

1. Ուսանողական խորհրդի ստենդ
2. Վթարային և հրշեջ ծառայության անվտանգության նախապատրաստում
3. Ավարտական կուրսերին ներկայացնել վիճակների ձևերը
4. Որոշել դեպարտամենտների նախագահներին
5. Կոնֆերանս դեկտեմբերի 5-ին
6. “Quest” նոյեմբերի 30-ին ֆինալ, դեկտեմբերի 1-ին համերգ
7. Ուսումնական պրոցեսի վերաբերյալ հարցեր
8. Ընթացիկ հարցեր

Ներկայացրեց`

Ղուկասյան Արփինեն օրակարգի յուրաքանչյուր կետը մանրամասնորեն:

Ելույթ ունեցան`

Բերակչյան Վահանը ներկայացրեց նոյեմբերի 26-ին կազմակերպված գործատուների հետ հանդիպման մասին, որը կրում է հետևյալ խորագիրը` “Тенденции спроса рынка труда”: Բնչպես նաև առաջարկեց տեղադրել Wi-Fi роутер առաջին հարկի միջանցքում, որը կտարածվի նաև ուսանողական խորհրդի սենյակում:

Ամայան Անահիտը առաջարկեց վերանայել ուտելիքի համար նախատեսված գնացուցակը բուֆետում և առավել խստացնել աշխատակիցների հիգիենան:

Բաղդասարյան Սասունը առաջարկեց զեղչել սպորտ կոմպլեքսում գործող գները ՀՌՀ ուսանողների համար:

Գասպարյան Լիդիան առաջարկեց գործող խմբակների համար կազմել գրաֆիկ (նշելով անցկացման վայրը, ժամը և օրերը) և փաթցնել ուսանողական խորհրդի գլխավոր ստենդի վրա:

Հովհաննիսյան Սարգիսը ներկայացրեց «Ուսմունք» դպրոցում կազմակերպված ասմունքի մրցույթի մանրամասներ:

Որոշվեց`

Ուսանողական խորհրդի ստենդի համար նշանակել պատասխանատուների: «Նորություններ» վերնագիրը փոխարինել «Նախորդ ամսվա միջոցառումները» վերնագրով և ակտիվորեն օգտագործել այն:

Վթարային և հրշեջ ծառայության անվտանգության նախապատրաստման համար յուրաքանչյուր ինստիտուտից ներկայացնել 7 հոգի: Ընդհանուր առմամբ 35 հոգի:

Մի շաբաթվա ընթացքում բակալավրի և մագիստրատուրայի ավարտական կուրսերում ներկայացնել վիճակների նախնական ձևերը և գրանցել առաջարկները:

Մի շաբաթվա ընթացքում յուրաքանչյուր ինստիտուտ ձևավորի իր դեպարտամենտները և ընդհանուր ուսանողական խորհրդի դեպարտամենտների նախագահների պաշտոնի համար ներկայացնի իր թեկնածուներին:

Դեկտեմբերի 5-ի կոնֆերանսի համար տեղեկացնել ուսանողներին:

Տեղեկացնել «Quest» Ինտելեկտուալ խաղի եզրափակիչ փուլ դուրս եկած թիմերին խաղի կայացման օրվա մասին (30.11.2014թ.) և խաղին նվիրված միջոցառման մասին (01.12.2014թ.).

Նոյեմբերի 26-ին գործատուների հետ հանդիպման համար յուրաքանչյուր ինստիտուտ իր մասնագիտությունների գծով հրավիրի առաջատար կազմակերպությունների ղեկավարներին:

«Ուսմունք» դպրոցում կազմակերպված ասմունքի մրցույթին անմիջականորեն մասնակցեն ՀՌՀ այն բոլոր ուսանողները, ովքեր ցանկություն կհայտնեն:

Նիստի նախագահ:

Ուսանողական խորհրդի նախագահ՝

/ Ղուկասյան Ա./

Քարտուղար՝

/ Հարությունյան Լ./